(վրացական) - «Գիտունի հետ քար քաշի, անգէտի հետ փլաւ մի ուտի» *(հայկական)*, «Ամէն դարպաս կարող ես փակել, բայց մարդու բերանը չես կարող» *(իրանական)* - «Բերանը քառասուն լիտր անլուայ բուրդ չի բռներ» *(հայկական)*։

Այսպիսով, առած-ասացուածքները, որոնք յօրինուել եւ պահպանուել են ժողովրդի գոյութեան ողջ պատմութեան ընթացքում, բանահիւսութեան ամենատարածուած ստեղծագործութիւններն են, որոնք կենսունակ են մեր օրերում եւս։ Ժողովրդական բանահիւսութեան այս կարեւորագոյն տարրերը օժտուած են մեծ կիրառելիութեամբ։ Բազմաթիւ ընդհանրութիւններ են առկայ հայկական, վրացական, իրանական առածասացուածքներում, մշակոյթներում։ Մի շարք առած-ասացուածքներ արտայայտում են նոյն կամ մօտ իմաստ։

ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի Հայ բանասիրութեան ֆակուլտետի եւ Մանկավարժութեան եւ կրթութեան զարգացման կենտրոնի մագիստրանտ

ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխանն, ի ճանապարհի տուր զհաշիւն զերծանել ի նմանէ։

Իմաստութիւն ծածկեալ եւ գանձ անյայտ, որ օգուտ է յերկոցունց։

Եւ որպէս կամիք թէ արասցէն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նրանց։

Որ փորէ խորխորատ ընկերի իւրում՝ ինքն լցցէ զնա։

Որդւոյ նենգաւորի բարի ինչ մի՛ լինիցի։

Շրթունք ճշմարիտք հաստատեն զվկայութիւն։

Ի միում մարմնի անդամս բազումս ունիմք, եւ անդամքն ամենայն զնոյն գործ ունին։

Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց։